

տուծոյ զաւրութեամբն՝ ախոյենիցն առ եպիսկոպոսան Եւսեբիւ. եւ թէ ո՛րպէս Եւսեբիոս վճարէր ի բանդին. եւ կամ ո՛րպէս Բարսեղ արծակեալ լինէր:

2 Ընդ այն ժամանակս անաւրէն կայսրն Վաղէս մեծաւ բարկութեամբ դատեր ընդդէմ ճշմարտութեանն մշակացն. այս ինքն որ միանգամ զհաւատն Զրիստոսի արժանապէս հաւատասցեն՝ թէ ճշմարիտ արդարեւ Որդի Աստուծոյ իցէ, եւ ծնունդ ի բնութենէն Հաւրն Աստուծոյ: 3 Վասն այսորիկ կամեր հալածանս տանջանս չարչարանս միահաղոյն¹ յարուցանել, եւ սաստիւ իշխանութեամբ առ ամենեսեան գրեալ եւ տալ հրաման:

4 Ապա ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան արիանոսացն աղանդոյն վարդապետք. զի ասէին, թող ընդ նոսա պայթար յանդիմանութեան հակառակութեան լիցի, արքայ. եւ որ կողմն յաղթեսցէ, յայտ լիցի. զի մի՛ զնա բռնադատ, զրադատ ինչ երեւեսցի յաղթութիւնն: 5 Եւ թագաւորն Վաղէս զայս լուեալ խնդալից լինէր. ըստրեաց իւր արս ճարտարս եւ պատրաստաբանս, զորս կարծէր դպիրս բանիբունս, որ անուանեալք էին չեպիսկոպոսունս աղանդոյն արիանոսաց: 6 Եւ յղեաց առ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս. եւ ժամ խնդրէր ի նոցանէ բանիցն քննութեան, զի ի հանդէս ածիցէ առ նա զնովաւ, եւ որ ճշմարիտն իցէ՝ յայտնի երեւեսցի: 7 Ապա իբրեւ սահմանեցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկոպոսն Եւսեբիոս զկղերն զամենայն, եւ ի մեծ հոգս մտանէր. ուստի՞ կարծիցէ² բանիցն պատասխանիս պատրաստել. զի եւ բանիւ ոչ ինչ կարի էր առաւել: 8 Ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուցեն զերանելին Բարսիլիոս, զի եկեսցէ նա: 9 Չի նա, ասէ, կարող է բանիւ զաւրութեանն. նա մեծ է, ասեն՝ ի նմա շնորհքն խափանել զնենգութիւն դաւաճանութեանն սատանայի. զի խորհի նա ի վերայ սրբոյ եկեղեցւոյ նորա, զոր ինքն արեամբն ստացաւ:

10 Գրեաց թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Եւսեբիոս առ երիցապետն Բարսեղ, եւ մեծաւ պաղատանաւ որ ինչ վասն պատուին պաշտամանն. զի մի՛ դիցէ ինչ ի մտի զառաջին եղեալ բանիցն գժտութիւն. այլ վասն զի առ Աստուած հաւատոց են³ բանքն եւ քննութիւնքն, վաղվաղակի փութասցի զալ առանց դանդաղանաց: 11 Արկին եւ կղերքն ամենայն ձեռնագիր աղաչանաց, զի մի՛ ինչ դանդաղեսցի զալ, այլ յարուցեալ փութանակի երթիցէ: 12 Եւ արս հաւատարիմս պատուականս յղեցին վասն վաղվաղ զայոյ:

13 Եւ այն ինչ արքն յուղի անգան, որ երթայինն ածել զնա անդր. արդ մինչ դեռ յուղի անգեալ երթային արքն՝ էին ի ճանապարհի, սուրբն Բարսիլիոս ուր էին՝ մինչ դեռ ի պաշտաման Տեառն կայր, անկաւ նմա քուն ծանր

1 *Յերիս օրինակս*՝ միահաղոյնս

2 *Տպ.* կարծիցես

3 *Յամենայն օրինակս*՝ հաւատասցեն բանքն